

մար հարկաւոր է ոչ թէ մի քահանայ, այլ երկու գիտնական, լեզուներ գիտցող, ուսեալ վարդապետառաքեալներ. մինը վեց ամիս ժամանակով հօվուելու է երկուտակի և շրջակայ հայերին մինչև Պետրոսպաւլովսկի. իսկ միւսը մինչի Սախալին, ձապոնիա և այսպէս փոփոխական. եկեղեցին ու քահանան որոշ չափով այն տեղերի հայերի համար միակ մսիթարութիւնը կը լինի և կապը իրենց ազգի հետ<sup>\*)</sup>:

Երեմիա վրդ. Առեփանեանց



## Գ Ր Ա Կ Ա Ն

### Մ Ա Ց Բ Ն Ո Ւ Ո Ր Գ Ի Ն

Սուլում է քամին դաշտերի միջով,  
Սրտագող ծառերն ողբում են կամաց,  
Երկիրը ծածկուած է ձիւնի հաստ շերտով,  
Կապոյտ երկինքը սև սուք է մտած:

Ու սառած գետի ցից ժայռոտ ափին,  
Դիւղի մի ծայրում մի խարիսուլ տնակ,  
Ըստուերների մէջ թաղուած ընաւին,  
Կանգնած նայում է թագուն ու մենակ:

Ու ներսը՝ դողդոջ ճրագի լուսով  
Լուսաւորուում է մի դէմք սպրտնած.  
Աչքերը կիսաբաց, ու մարած յուսով  
Նայում է մանկան՝ կրծքին մահացած:

<sup>\*)</sup> Արտատպելու կամ օգտումլու իրաւունքը վերապահուած է։ Շուտով լրյա կը տեսնի առանձին գրքոյիով։ Ե. գ. Ս.

Ու գուան ճեղքից անլուռ ու ջղոտ  
Սուլում է քամին զայրոյթով լեցուած,  
Ու ճրագի բոցն գողդով ու ազօտ  
Դողում է՝ կարծես վախից սարսափած։

Կարծես ասում է այդ վախով մեղմիկ  
«Հանգիր տառապող, ինչպէս քո փոքրիկն.  
Ել չարժէ ապրել քանի մաքուր սէր,  
Մարդկանց սրտերում չէ իշխող ու տէր»։

«Ել չարժէ ապրել, քանի մամոնան  
«Աշխարհի սանձը իւր ձեռքում ժողուած  
«Դարձել է երկիրն արեան մի ովկեան։  
«Ու ինքն է այժմ գերիշխող Աստուած»։

«Հողը հիւրասէր իւր կրծքով փափուկ  
«Քեզ կը տայ հանգիստ, վշտերիդ վախճան,  
«Այնտեղ էլ չկայ այս կեանքը անձուկ,  
«Գնա ու հանգիր այն տեղ յաւիտեան»։

Սուլում է քամին գուան ճեղքերով։  
Դողում է լոյսը ազօտ ճրագին,  
Մեռնում է մայրն էլ լի խոր ցաւերով  
իւր մեռած որդուն պինդ սեղմած կրծքին։

Ա. Գ.

Դեկտեմբերի 22-ին 1904 թ.

